ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 412-Լ

«19» 04 2024 թ. ք. Երևան

## ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տավուշի մարզի դատախազ Գոռ Արամայիսի Ալոյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և Արմեն Արթուրի Մուրադյանին նույն մարզի դատախազի պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 17.04.2024թ. համապատասխանաբար՝ N 150-Ա և N 152-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝**

1. Կատարել Գ.Ալոյանի կողմից՝ Տավուշի մարզի դատախազության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ա.Մուրադյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

***Հանձնախմբի ղեկավար՝***

Ավագյան Եղիազար - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

***Հանձնախմբի անդամներ՝***

Գրիգորյան Վահե - Տավուշի մարզի դատախազի տեղակալ

Առաքելյան Ռուբեն - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ

Նազարեթյան Արմինե - Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ

Ղահրամանյան Մարուշ - Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար

Մանուկյան Լիաննա - Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ

Մելքումյան Աննա - Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժնի պետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2024 թվականի մայիսի 10-ը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ